

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Journal of the Society for Armenian Studies (JSAS), volume 4, Los Angeles, 1988—1989.

Լույս է տեսել «Հայագիտական հետազոտությունների ընկերության հանդեսի» չորրորդ համարը (Լոս Անջելես, 1988—1989)։ Գլխավոր խմբագիրն է պրոֆ. Ա. Սանջյանը, խմբագրական կոլեկտիվի անդամներն են Գ. Բարդաքյանը, Ռ. Հովհաննիսյանը, Վ. Օշականը, Դ. Փափազյանը, Ռ. Սանին, Ռ. Թոմսոնը։

Հանդեսն սկսվում է հայոց պատմության և մշակույթի խոշորագույն մասնագետ Սիրարիի Տեր-Ներսեսյանի և նշանավոր հայագետ Հակոբ Անասյանի հիշատակին նվիրված ջերմ և խորին երախտագիտությամբ ղրված կենսագրականներով, որոնց հեղինակներն են Ն. Ալլենը և Ա. Սանջյանը։

Ջորջ Գորգոն Բալրոնի ծննդյան 200-ամյակին նվիրված Զ. Գաուսեթի «Խենթը նորեն եկավ»։ Բալրոնը և հայերենը հողվածը սկսվում է մի հաղորդմամբ, ըստ որի, երբ երիտասարդ Բալրոնը հայոց լեզուն ուսումնասիրելու բուռն ցանկությամբ 1816 թ. դեկտեմբերին իր առաջին այցելության հաջորդ առավոտ կրկին եկավ Ս. Ղազար կղզին, Մխիթարյան միաբանության վանահայր Հարություն Ավդերյանը՝ մեծ բանաստեղծի ապագա ուսուցիչը և երկրպագուն, ներկա վանականներին ասել է. «Խենթը նորեն եկավ»։ Այս արտահայտությունն ընտրելով որպես բնարան, պրոֆ. Զ. Գաուսեթը իր դիտական հետազոտություններին բնորոշ խորությամբ, կարողացել է բնութագրել և իր գնահատականը տալ լոր Բալրոնի, թեկուզ և երեք ամիս տևած բացարձակ կլանվածությամբ հայ մշակութթով։

Հայոց քերականության, պատմության և բանաստեղծական արվեստի բնագավառներում Բալրոնի հետաքրքրության գաղափարական ուղղվածությունը և բանաստեղծական ներշնչանքի զորապատճառը ամփոփված է Հ. Ավդերյանի և իր «Փերականութիւն հայերեն և անգղիական գրքի համար բանաստեղծի գրած Առաջարանում, որի հետևյալ հատվածը բերել է Զ. Գաուսեթը. «Այս մարդիկ քահանաներ են մի հարստահարված և ազնվական ազգի, որը

հրեաների և հույների նման տարագիր և ստրուկ է Լոռի առանց առաջինների պես խստասիրտ կամ վերջինների պես դերի դառնալու։ Այս ժողովուրդը հարստացել է առանց վաշխտության և վաստակել է ամեն պատիվ, որ կարող են գերության մեջ վաստակել առանց խարդախության։ Բայց նրանք, այնուամենայնիվ, երկար ժամանակ զրավեցին իրենց րածին «Գերության Տան» մեջ, որ վերջերս րազմապատակել էր իր անթիվ օթևանները։ Դուք և զվար կլինեի որևէ այլ աղբի տարեգրությունները գտնել ավելի նվազ արատավորված ոճերներով, քան հայոց, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ թերությունները՝ ճնշման հետևանք։ Սակայն ինչպիսին էլ Լոռի լինի նրանց ճակատագիրը, իսկ զա անցյալում գառն է եղել, ինչպիսին էլ լինի նա ապագայի մեջ, նրանց երկիրը հավետ պիտի մնա որպես աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը և թեևս միայն նրանց լեզուն կարիք ունի ավելի շատ ուսումնասիրվելու, ավելի զարգիչ գաղափար համար։ Եթե Ս. Գիրքը ուղիղ ըմբռնենք, Հայաստանի մեջ էր, որ զետեղված էր գրախտը, Հայաստան, որ Աղամի սերունդների շափնունքան թանկ վճարեց իր հոգու վաղանցուկ մասնակցության համար այն մարգու երջանկությանը, որն իր փոշուց էր ստեղծված։ Հայաստանի մեջ նախ ջրհեղեղը տեղաց և ապա աղավինն հանգչեց։ Կարելի է ասել, թե գրախտի անհետացման հետ սկսվեց նաև այս երկրի տարաբախտությունը, որովհետև թեպետև երկար ժամանակ նա Լոռի մի զորավոր թագավորություն, բայց հազիվ երբևէ անկախ մնաց. և՛ պարսից սատրապները, և՛ թուրքական փաշաները հավասարապես անապատ դարձրին այն երկիրը, ուր Աստված ստեղծել էր մարդուն ըստ իր հատուկ պատկերի» (տե՛ս և. Դաշտենց. Բալրոնը և հայերը, Երևան, 1959, էջ 92—93)։ Այստեղ «Գերության Տան» և նրանից բազմապատկված անթիվ օթևանների մասին հիշատակությունը թույլ է տվել Զ. Գաուսեթին ենթադրելու, թե այն վե-

րարերն է Վենետիկի ավստրիական տիրակալներին և հիմնականում այս էր պատճառը, այլ ոչ թե թուրքերին ու պարսիկներին դատապարտելը, որ միարանությունը, քաղաքական զգուշավորությունն ցուցաբերելով, ժամանակին չհրապարակեց լորդ Բայրոնի Առաջարանը և հենց դա էլ խզման պատճառ հանդիսացավ բանաստեղծի և միարանության միջև Առաջարանը լույս տեսավ Բայրոնի մահվանից 28 տարի անց՝ 1852 թ. Վենետիկի Միսիթարյանների կազմած անգլիական բանաստեղծների լավագույն ստեղծագործությունների ժողովածուում:

9. Դառուսթը անդրադարձել է հայերենից անգլերեն Բայրոնի կատարած թարգմանություններին Մ. Գրքից, Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ից, Ներսես Լամբրոնացու «Առևանարանությունից» Գիտնականը հատուկ քննել է նաև Ղ. Ինճիճյանի «Ամարանոց Բիզանդեան» պոեմի նախերգանքի և Առաջին Նրդի անգլերեն թարգմանությունը՝ ցույց տալու համար լորդ Բայրոնի բանաստեղծական հանճարի թարգմանական նրբերանգները:

Մ. Նիշանյանը իր «Շահան Շահնուրի նահանջը» հոդվածում հետադուր էր ականավոր սփյուռքահայ գրողի «Նահանջը առանց երգի» վեպը, ելակետային դարձնելով բախումը օտարի հետ դրուժը, այսինքն, օտարություն մեղ գտնվող հայի ընդհարումը տեղաբնակի և իր սեփական օտարացման հետ: Շահան Շահնուրը 26 տարեկան էր, երբ իր վեպը հրատարակվեց Փարիզում (1929 թ.) և լայն ճանաչում գտավ: 2. Օշակների կարծիքով, որը բերել է Մ. Նիշանյանը, Շահնուրը իր վեպում ներկայացրել է եթե ոչ մեկ սերնդի, գոնե դրա մի մասի հոգևոր ուղիղագիծը: Այդ սերնդին են պատկանում Ն. Սարաֆյանը, Ծ. Նարդունին, Վ. Շուշանյանը, որոնք 1930 թ. Փարիզում հիմնադրված «Մենք» պարբերականում գրողների ավագ սերունդը դատապարտող հոդվածներ են տպագրել: Քննադատության հիմնական թիրախն էր նախորդ գրողների գրական կողմնորոշումը, որը, ըստ «Մենքի» շուրջ համախմբված երիտասարդ սերնդի գրողների կարծիքի, կեղծ լինելով, հանգեցրեց Աղետի: Այնուհետև Մ. Նիշանյանը անդրադառնում է Աղետի և գրականության միջև եղած կապին:

Երողների նոր սերունդը ավագներին մեղադրում էր ոչ միայն Աղետի կանխագուշակման թերացման, այլև «հայրության» և «օրենքի» փոխանցումը իրականացնելու ի վիճակի չլինելու մեջ: Մ. Նիշանյանի կարծիքով, կործանումը համբերությամբ տանելու հնարավորություն տվող պաշտոնական և օտարների ու

սփյուռքի ժամանակակից սերնդի միջև տարական տարբերությունն ստեղծող «օրենքի» անուղղելի բացակայությունը առաջացել էր դատարկություն, որի հետ սփյուռքը ստիպված էր հաշտվել: Միայն գրականությունը կարող էր բացահայտել այդ դատարկությունը: Գրողի քանքերով է, որ ճգնաժամը դառնում է ակնհայտ, Հոգիվածագրի դիպուկ արտահայտություն, գրականությունը ճգնաժամի պահակն է: Շահնուրի սերունդը առաջինն էր, որ ճաշակելու էր բախումը օտարի հետ: Այսպիսով, Շահնուրի երկում Մ. Նիշանյանը տարբերում էր գրական երկու ասպակտ, որոնցից առաջինը «քննական» է, իսկ երկրորդը՝ «գեղարվեստական», որը խորիմաստ և նուրբ է, և, իհարկե, ավելի հետաքրքրական: Վերջինիս քննությունն է նվիրել Մ. Նիշանյանը իր հոդվածի մնացած մասը: Հոգիվածագիր բարձր գնահատելով Շահնուրի վեպը, նշել է, որ այն, գրված լինելով սփյուռքին սպառնացող Աղետի խորումբունամբ, եղել է երկու-երեք սերնդի սեղանի գիրք:

Լ. Պ. Ալիշանի «Սուրբ նախատիպերը և հայկինը» ընդարձակ ակնարկի փոխտիպայական առանցքն էր պտղաբերության մարմնավորումը հանդիսացող կնոջ սրբազնացումը հողի պաշտամունքի հիման վրա: Հազարավոր տարիների ընթացքում, մինչ գերագույն, եզակի, արական երկինք-աստծու հայտնաբերումը, Մեծ Մայրը և նրա վեհանձնը դրսևորում էր Մայր Հողը տիրապետում էին մարդկության կրոնական մտքի վրա: Լ. Ալիշանի դիտարկման համաձայն, եթե Սանդարամետ, Անահիտ և Նանե աստվածուհիները, շնորհիվ հողի կամ քրի հետ նույնացվելու, հանդիսանում էին կյանքի մարմնավորումը, ապա նույնը չի կարելի ասել Վահագն աստծու կնոջ՝ Աստղիկ աստվածուհու մասին, որը շնայած գեղեցիկ էր և նույնացվում էր Աֆրոդիտի հետ, սակայն մայրության խորհրդանիշ չէր: Նախաքրիստոնեական Հայաստանում աստվածուհիների բազմազանությունը և այսպիսի գերակշռությունը հեղինակին թույլ է տվել ենթադրել, որ հայ կանանց սոցիալական դիրքը համեմատաբար բարձր էր, քան քրիստոնեական դարաշրջանում:

Լ. Ալիշանը ուշադրություն է հրավիրել այն հանդամանքի վրա, որ նոր կրոնը՝ քրիստոնեությունը, հայրիշխանական բնույթի էր և իրենից ներկայացնում էր եռանկյուն միասնություն՝ բաղկացած երեք արական անկյունից՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Մարիամի պաշտամունքի և ընդհանրապես կերպարի հետ կապված հարցերը պարզելու համար Լ. Ալիշանը քննել է Եվայի կերպարը, որպես կնոջ

սկզբնական նախատիպ քրիստոնեության մեջ՝ «վաղ քրիստոնեությունը Երկրորդ Եվայի սըր-րազնացված գերր վերապահեց ոչ թե Մարիամին, այլ Եկեղեցուն («Երկրորդ Եվա», «Մայր Եկեղեցին»)։ Գիտականը այս տեսանկյունից ուշադրություն է հրավիրում Հայոց եկեղեցում «Ավել Մարիա» աղոթքի բացակայության վրա։ Նա վաղ քրիստոնեական եկեղեցուն բնորոշ արտահայտություններ է նշում Աղոթանդանիի և Նիզիի երկերում։

1. Ալիշանը Մարիամի որպես Աստվածածին հայտնի դառնալը և նրա պաշտամունքի ծաղ-չունքը քրիստոնեական լուսավեճի հետևանք է համարում։ Հայ քրիստոնեության համար, ըստ դիտականի, էական դարձավ աստծու մարմ-նական ծնունդը Մարիամից, որը, ինչպես և քրիստոնյա մնացյալ աշխարհի պատկերաց-մամբ, չէր բարձրացել և դարձացել նախա-քրիստոնեական աստվածության իզակառ հիմ-քից։ Ի վերջո Եկեղեցին կորցրեց իր դիրքը որպես Երկրորդ Եվա, որը դրադեղերը Մարիա-մը, դառնալով մարդկությունը առաջին Աղամի մեղքերից փրկելու եկած երկրորդ Աղամի մայ-րը, 1. Ալիշանի կարծիքով հայ քրիստոնյա կիներ ընտրելու էր երկու նախատիպերից մե-կը՝ կամ իննել Եվա և այլովիլ դժողքում, կամ էլ նմանվելով Մարիամին, Հոհիսիմելի և Գա-լանի օրինակով կյանքից հեռանալ որպես կուլ-սահաաակ, Ի վերջո նա կարող էր հայ կանանց մեծամասնության ճակատագրին ար-ժանանալ, ամուսնանալ առանց որևիցե ընտ-րության իրավունքի, ծնել երեխաներ և իր կյանքի մնացյալ մասը անց կացնել զարմա-նալով, թե ո՞վ էր ինքը, քանի որ անշուշտ նա ոչ Նվան էր, ոչ էլ Աստվածածին մայր։

2. Ալիշանը գրում է, որ թեպետև հայ Եկե-ղեցին վերջնականապես ընդունեց Մարիամին որպես Աստվածածին՝ Եկեղեցի սոսկ Քրիստոսի մարդկային և աստվածային բնության կա-տարյալ փոխադրակցության մասին իր ունե-ցած քրիստոնեական համոզմունքից, այնուա-մենայնիվ Մարիամի պաշտամունքը քրիստո-նեական Հայաստանում պահպանվեց և նշա-նակալիություն ստացավ հիմնականում շնոր-հիվ նրա՝ որպես զթառատ պաշտպանի գոր-ծառնությունը։ Մարիամը Հոր ցասումից և պատժից Երեխաներին փրկող մայր էր։ Մա-րիամ Աստվածածնի կերպարի այս գիծը ար-տացուլվել է հայ միջնադարյան արվեստում։ Ամփոփելով, 1. Ալիշանը գրում է, որ քրիս-տոնեական պարալլելալում հայ կիներ ժամա-նակավորապես կորցրել էր իր մայրական նա-խատիպը, սակայն նոր ժամանակներում հայ կիները հնարավորություն ընձեռնվեց լինելի գի-տակցելու իր ներուժը և ցուցադրելու, որ ինքը

կարող է հավասար լինել ցանկացած տղա-մարդու և նույնիսկ գերազանցել նրան։

Ռ. Փիրումյանը «Հակոբ Օշականի երկերը Աղևտի մասին» հոդվածում ուշադրություն է դարձրել 1915 թ. Նդեռնի կապակցությամբ Հ. Օշականի գրված երկերի գեղարվեստական արտահայտամիջոցների և կերպարների վրա։ Հեղինակը դրանք առանձնացրել է Հ. Օշա-կանի քննադատական դործերից։ Ըստ Ռ. Փի-րումյանի, Հ. Օշականի տառ հատորանոց «Հա-մապաակեր արեմաահայ գրականության» աշ-խատությունը ընթացած համարվում է դրական քննադատության դործ, սակայն իր գաղափա-րով և բնույթով այն կարող է դիտվել որպես վեպ։

Ռ. Փիրումյանը մանրամասն անդրադարձել է Հ. Օշականի (1883—1948) կյանքին և գոր-ծունեությանը, որի առանցքն է կաղմել դրա-կան ստեղծագործությունը։ Նա լրիվ կիսել է արեմաահայ մտավորականության այն մասի ճակատագիրը, որը հրաշքով փրկվելով թուրք-յաթաղանից այնուհետև տարիներ շարունակ ստիպված է եղել տարագրության մեջ ապրել, հաղթահարելով իրեն բաժին հասած օտարու-թյան բոլոր դժվարությունները։ Հ. Օշականի դիտական սխրանքը կարելի է համարել այն հսկա դրական ժառանգությունը, որ նա իր հո-գու ուժով և ստեղծագործական տաղանդով թողեց հետագա սերունդներին։

Ռ. Փիրումյանը քննել է Հ. Օշականի «Կայ-սերական հաղթերգություն» հինգ պատմվածք-ներից բաղկացած գիրքը և «Մնացորդաց» վե-պը 1915 թ. հայկական կոտորածներին և աքսորումներին նվիրված Հ. Օշականի հինգ պատմվածքների շարքը առաջին անգամ լույս տեսավ 1920 թ. հունվարի 18-ի և հոկտեմբե-րի 18-ի միջև, Կոստանդնուպոլսում հրատա-րակվող «ճակատամարտ» պարբերականում։ Առանձին գրքով այդ պատմվածքները հրատա-րակվեցին 63 տարի անց՝ 1983 թ. Հ. Օշակա-նի հարյուրամյակի առթիվ։ Այդ պատմվածք-ներից մեկի վերնագրով գիրքը կոչվեց «Կայ-սերական հաղթերգություն»։

Հ. Օշականը 1931 թ. սկսեց «Մնացորդաց» վեպը և 1934 թ. արդեն Երեք հատոր հրա-տարակել էր, որոնցում նկարագրված են թուր-քերի կողմից հայերի հալածանքները և անար-դարացի հետապնդումները սկսած XIX դարի վերջից մինչև 1915 թ. կոտորածները։ Ռ. Փի-րումյանը մանրամասն քննելով «Մնացորդաց» վեպը, ընթերցողի ուշադրություն է հրավի-րում Հ. Օշականի այն դիտողության վրա, որ ոչ թե առաջին համաշխարհային պատերազմը թուրքերին դարձրեց թուրք, այլ թե՛ պատե-րազմից առաջ և թե՛ պատերազմից հետո

նույնն էր տեղի ունենում՝ զագանային բռնությունները սովորական լին թե՛ նախա- և թե՛ ևսպատերազմյան Թուրքիայի համար: Սա Հ. Օշականի բացահայտ պատասխանն էր որոշ եվրոպական շատադուներին, որոնք պնդում էին, թե հայկական աղետը պատերազմական վիճակի արդյունք էր: Այնուհետև Հ. Օշականը բերում է սահմանակցությունը վկայություններ հայերի անդեպ զործադրած թուրքերի գաղանալությունների մասին:

Ռ. Փիրումյանը, բարձր ղեհատելով Հ. Օշականի ավանդը եղևնի տոաշին սերնդի գրողների դրական ժառանգության մեջ, դրել է, որ նրա հիմնական գաղափարն էր՝ աշխարհը պետք է դատապարտի հայերի ցեղասպանության հանցագործներին, գաս քաղի անցյալից՝ այն չկրկնելու համար:

Պ. Քաուի «Մկրտիչ Նաղաշի ալարանական բանաստեղծությունը և դրա մոդելները» հոդվածում արծարծվում է ալարանության կարևոր դերը հայ գրական և մշակութային կյանքում: Ալարանությունը հոգևորականների և իշխանների շրջանակներում մեկուսացված դրադունք չէր: Ընդհակառակը, այն ի հայտ է դալիս նաև ժողովրդական խոսվածքում, ինչպես, օրինակ, Երուսաղեմի մասին Պետրոսի երազի. և Մարիամ Ասավածածինին խորհրդանշող Նապուրիլ պեկնաց ծառի գեպքում: XV դարի Ամիդի եպիսկոպոս և Միշաղեաթի հայոց հոգևոր առաջնորդ Մկրտիչ Նաղաշի բանաստեղծական ժառանգությունը իր վրա ընդհանուր առմամբ կրում է այդ արտահայտչամիջոցին նմանվելու կնիքը: Պ. Քաուն այս տեսակետից վերլուծել է Մկրտիչ Նաղաշի «Տաղ ի դէմս մարգարէիցն և Քրիստոսին և Լուսաւորին», որի անգլերեն թարգմանությունը կատարել է բարձր մակարդակով Համեմատելով միջնադարյան հայ քնարերգության տարբեր նմուշներում առկա ալարանությունները, Պ. Քաուն փորձել է ցույց տալ դրանց սնուցող գրական արմատները և այն հիմնական գործոնները, որոնց ազդեցությունը Մկրտիչ Նաղաշը կրել է իր այս բանաստեղծությունը ստեղծելիս: Ըստ Պ. Քաուի, մեկ անգամ ես ի հայտ է գալիս այն իրողությունը, որ միջնադարյան քնարերգությունում ստեղծագործումը ոչ այնքան նոր թեմաների հորինման, այլ արդեն ավանդական դարձածների նորովի ներկայացման արգասիք էր: Գիտականը գրում է, որ «Տաղ ի դէմս մարգարէիցն...» Մկրտիչ Նաղաշը ստեղծել է սրբերից մեկի տոնակատարությունների առիթով. սակայն պատմական փաստերի պակասության հետևանքով, ըստ նրա, այս միացն ենթադրու-

թյուն է: Քանի որ դիդակտիկական տարրը ավելի ցցուն է Նաղաշի մոտ, ուստի նրա բանաստեղծությունը չի բավականացնում հուզական լարվածությունը, այլ ավելի բնորոշ է քնարերգական պարզությունից բխող հանդարտ անկեղծությունը: Պ. Քաուն եզրակացնում է, որ Մկրտիչ Նաղաշի ծաղկե կերպարներով սահմանափակվելու խստապահանջությունը զուգորդվում է բառային համապատասխանությունների և ընդօրինակությունների ներհյուսված կապով, որը յուրաքանչյուր գործողություն մոտեցնում է իր բուն էությանը:

Ջ. Ռասելը, շարունակելով մանրակրկիտ պրպտումները հայ միջնադարյան արվեստի կրոնական ակունքները բացահայտելու ուղղությամբ, իր «Հանգանակ հավատո Արևորդիների համար» հոդվածում քննել է ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» քսանչորս տնից բաղկացած հավատո հանգանակը, որը նա գրել էր 1154 թ. Այն մեծ ժողովրդականություն էր վայելում հայերի մոտ, ժամագրքում այն կրում է «Աղոթք իւրաքանչիւր անձին հաւատացելոց ի Քրիստոսս վերնադիրը, Ինչպես գտնում է Ջ. Ռասելը, աղոթքի որոշ հատվածներ իրենց զուգահեռներն ունեն գրադաշտական դավանանքի որոշ կողմերի հետ, թեպետև նա անհրաժեշտ է գտնում ընդգծել, որ Շնորհալու ձևակերպումը, ամեն դեպքում, ուղղահայտ է: Ըստ հոդվածագրի նմանությունը պատահական չէր, որի պատճառները գտնելու համար նա համեմատում է «Հավատով խոստովանիմ» բարոյագիտական եռյակ ներկայացնող գրադաշտական մի աղոթքի հետ:

Ջ. Ռասելը գտնում է, որ ներսես Շնորհալին իր «Հավատո հանգանակ» ստեղծելու համար առնվազն մեկ հնարավոր պատճառներու Որպես կաթողիկոս նա գրել է «Թուղթ ընդհանրական» ի պատասխան Սամսատի եպիսկոպոսի խնդրանքի՝ թե ինչպես անցկացնել զանգվածային դավանափոխություն: Թրվում է թե ներսեսը լավ տեղյակ էր այն մարդկանց մասին, որոնց պատրաստվում էր մկրտել եպիսկոպոսը: Նրա Թուղթը հասցեատիրոջը տեղեկացնում էր ինչպես նրանց ծագման, այնպես էլ հավատի մասին: Նրանք կոչվում էին Արևորդիներ և հանդիսանում էին Ջրադաշտի հայ հետևորդներ, որոնք Սուրբ Գրիգոր կուսավորչի ժամանակ քրիստոնեություն չէին ընդունել: Ներսեսը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում նրանց քրիստոնեական հավատի բերելու գործում: Գիտականի կարծիքով «Հավատով խոստովանիմ» ներսես Շնորհալին գրել է «Թուղթ ընդհանրականից» տարիներ առաջ, Արևորդիներին քրիս-

առնելով իր հրապուրելու միտումով Զ. Ռոսսիի գտնում է, որ Ներսեսը որպես բանաստեղծ զգալուն էր հայկական ոչ քրիստոնեական պոետիկների հանգստի, որոնք նա ներմուծում էր քրիստոնեական կոմպոզիցիաների հարմար տեղերում՝ հասարակ ժողովրդի քրիստոնեական հավատը ուժեղացնելու համար։ Ուստի, ըստ հոգվածագրի, Ներսես Շնորհալիին «Հավատով խոստովանիր» գրել էր Արևորդիների կողմից քրիստոնեության ընդունումը առաջացնելու նպատակով։

Հ. Անասյանը իր «Թուրքական ֆյուլթյուլ»-վերևի և հայերեն հոլովածի քննության առարկան է դարձրել քրիստոնեական, հատկապես հայերի և մասնավորապես հայ արհեստավորների ողորդական վիճակը XVI—XVIII դարերում Օսմանյան կայսրության մեջ։ Փաստական նյութի հիման վրա դիտարկելով ցույց է տալիս, որ օսմանյան տիրապետության երկրորդ կեսին քրիստոնեական աղաները բռնի կերպով մահադակեանացվել էին և թրջացվել (ըստ ֆրանսիացի պատմաբան Բ. Լավալեի տվյալների), իսկ շատ քրիստոնեական աղաները բռնի ուժով տարվել էին հարևաններ։

Հ. Անասյանը իրեն ընդունում է իրական մասնադիմումով հետազոտել է Ուրախ Գրիգորի (1661—մոտ 1710 թթ.) գրված պատկերող մի փաստաթուղթ, որում մանրամասնորեն հաղորդվում է թե ինչպես Օսմանյան կայսրության հայկական նահանգների հայ արհեստավորներին ստիպում էին թուրք արհեստավորներին հետ միասին մասնակցել մահադակեան ծիսակատարություններին, որոնց ընթացքում հայերին զրդում էին ուրացության դիմելու։ Հ. Անասյանը հետազոտել է օսմանյան պատմության վաղ ժամանակաշրջանի պատմական ծագում ունեցող համաքրիստոնեական (ֆյուլթյուլ) համակարգը, իր զարգացման ընթացքում այն կրել էր Օսմանյան կայսրության թուրքական կրոնական և տնտեսական պայմանների ազդեցությունը և դարձել էր միջնադարյան հզոր սոցիալական հաստատություն։

Հայ արհեստավորներին այդ եղանակով մահադակեանացնելը և թուրքացնելը օսմանյան տիրապետության ժամանակաշրջանին բնորոշ հայահալած քաղաքական դրսևորումներից էր։ Հ. Անասյանը հետազոտել է Ուրախ Գրիգորի հաղորդած տեղեկությունները ֆյուլթյուլի համակարգին բնորոշ ծիսակատարությունների մասին, որոնք օտար էին հայ արհեստավորներին համար։ Թուրք պաշտոնյաները դրանք քմահաճորեն պարտադրում էին հայ արհեստավորներին։

Ինչպես եզրակացնում է Հ. Անասյանը, Ուրախ Գրիգորի 1709 թ. գրված «Ծաղաղ» նշանաց եւ արուեստից եւ մեքենայից նկարներն (տե՛ս զոկտոբր Հ. Ս. Անասյան, Մանրեր, Լոս Անջելես, 1987, էջ 616—620) մինչև այժմ անհայտ մնացած աղբյուր է, որը լույս է սփռում թուրքական ուժացման քաղաքականության վրա։

Ի. Հավանների «Բենեդիկտոս Նյուրնբերգի վարքը վաղ Հայսմավուրքում» հոգվածում քննվում են Հայսմավուրքի զարգացման փուլերը և նրանում ընդգրկված Բենեդիկտոսի վարքի տարրերակները։ Հետազոտողը անդրադարձել է Հայսմավուրքի հրատարակության ներքին և դրա զարգացմանը վերաբերող հիմնական տեսություններին։ Բենեդիկտոսի վարքը ասացին անգամ հայերեն լույս տեսավ Հայսմավուրքի այն հրատարակությունում, որը երեք անգամ տպագրվեց Կոստանդնուպոլսում 1706 և 1730 թթ. միջև։ Այս վարքը Բենեդիկտոսի մասին մի ընդարձակ պատմվածք է, որը հիմնված է Հռոմի պապ Գրիգոր Մեծի «Տրամախոսության» երկրորդ դրքի վրա, սակայն հայերեն տեքստը հենվում է ոչ լատիներեն բնագրի և ոչ էլ հունարեն տարբերակի վրա։ Հայերեն տեքստը ներսես կամբոնացու կողմից հայերեն թարգմանված «Տրամախոսության» երկրորդ դրքի որոշ իրադարձությունների համառոտ վերաշարադրությունն է։ Այս առաջին տպագիր վարքի (Հայսմավուրքում) կախածությունը ներսես կամբոնացու տեքստից, ինչպես նշում է Ի. Հավանները, պարզ երևում է «Տրամախոսության» քանակականորոշ գլխում պարունակված մեկնաբանությունների համեմատությունից։ Հոգվածում քննված մյուս վարքերում (Հայսմավուրքի) այս գլուխը բացակայում է։ Ի. Հավանները հատկապես հետազոտում է Հայսմավուրքի 1834 թ. հրատարակությունում զետեղված Բենեդիկտոսի վարքի համառոտ տարբերակը, որն առկա է նաև մի վաղ Հայսմավուրքի ձեռագրի (1316 թ.)՝

Զ. Բայանի խմբագրությամբ վերատպագրությունում (1930)։ Գիտնականի կարծիքով սուրբ Բենեդիկտոսի վարքի համառոտ տարբերակը ավելի վաղ է մտել Հայսմավուրքի մեջ, քան ընդարձակը։ Չնայած որոշ կետերում նրանց միջև եղած նմանություններին, այնուամենայնիվ, համառոտ վարքը ընդարձակի ուղղակի կրճատումը չէ, քանի որ այն պարունակում է վկայակոչումներ Գրիգոր Ա պապի «Տրամախոսության» երկու գլուխներից, որոնք ընդհանրապես բացակայում են ընդարձակում։ Բնագրերի համեմատական քննությունը Ի. Հավաններին բերել է այն եզրակա-

ցության, որ վարքի համառոտ տարբերակը ներդառնալից հին է և հիմնված է «Տրամա-խոսության» ներսևս լամբրոնացու հայերեն տարբերակի վրա: Հոգվածի վերջում Ի. Հավաները բերել է խնդրո առարկա բնագրերը և դրանց թարգմանությունները:

Մ. Սթոունի «Հայերեն Գիրք» ծրարայն հոգվածը նվիրված է Մաշտոցի անվան Մատենադարանի № 9100 ձեռագրի (1686 թ.) «Յիմաստովն էն Սիրաբայ» և «Հարցմունք Աթ. Աղեքսանդրացու» և պատասխանի հրեշտակին» բնագրերի միջև ընդօրինակված «Գիրք Նզարասյա»-ին, որը բանաստեղծական ողբ է՝ ապագայում սպասվող սարսափների մասին: Փաստորեն, ըստ հետազոտողի, այս տեքստը հայերեն ավանդված Նզարասի 16-րդ դրոխն է և դրանով է բացատրվում հոգվածում բերված բանաստեղծական տողերի համարակալումը: Մ. Սթոունը բանաստեղծական ողբի բնագրին զուգահեռ բերել է իր կատարած դրա անգլերեն թարգմանությունը:

Հանդեսն ավարտվում է Ռ. Վիլքինսոնի «Հին Հայաստանի քանդակագործությունը» հոգվածով: Հեղինակը փորձել է պարզել հետևյալ հարցերը. ի՞նչ աստիճանի էր հունա-հռոմեական քաղաքակրթությունը արմատներ գցել Հայաստանում, հունա-հռոմեական մշակույթը Հայաստանում մնաց որպես նախնական արևմտյան և հարավի երկրներից, թե՞ Հայաստանը, բավականին հագեցվելով հելլենիզմի ոգով, իր սեփական ներդրումը կատա-

րեց այդ մշակույթի մեջ: Ելնելով բազմաթիվ քանդակների ոճական միատարրությունից, գեղարվեստական կոնցեպցիայի նույնությունից և տեխնիկական մոտեցումից, հետազոտողը այն կարծիքն է հայտնել, որ դրանք հնագույն ժամանակներից Հայկական լեռնաշխարհում գործարկված ավանդական արվեստի ձևի արգասիք են: Միևնույն ժամանակ, Ռ. Վիլքինսոնը դիտարկել է, որ ուշ հունա-հռոմեական ազդեցությունը սկսել էր արտահայտվել հայ քանդակագործության մեջ, որի վկայություններն են տուֆից կերտված և III—IV դդ. ֆիլագրվող տղամարդու և կնոջ քանդակված գլուխները՝ գտնված հնագիտական պեղումների ընթացքում Երևանի մոտ և Շիրակում: Հայաստանում հայտնաբերվել են նաև որոշակի թվով քանդակներ, որոնք հունա-հռոմեական վարպետների ստեղծագործություններն են: Նրա կարծիքով հունական և արևելյան արվեստի սինթեզը, որը այդքան բնորոշ էր Կոնստանդնուպոլսի լեռից հայտնի քանդակագործությունը, թվում է, թե ոչ մի զուգահեռ չունի Հայաստանում, քանի զեռ չեն կատարվել այնպիսի հայտնագործություններ, որոնք կարող են թույլ տալ ենթադրել այդպիսի արվեստի բնագավառում որևէ հատուկ տեղական ներդրման մասին: Ռ. Վիլքինսոնի հոգվածում առկա են վիճելի գրույթներ և հենց ինքը հոգվածագիրը նշել է իր տարակարծությունները հայ արվեստաբանության մեջ եղած որոշ կարծիքների հետ:

Armenian Review, volume 42, number 2/108, Boston, 1989.

Լույս է տեսել «Հայկական հանդես» 42-րդ հատորը, № 2/166 (Բոստոն, 1989): Գլխավոր խմբագիրն է պրոֆ. Ռ. Հովհաննիսյանը, խմբագրական կոլեգիայի անդամներն են Ա. Աղամյանը, Վ. Բալեքչյանը, Լ. Զորբաջյանը, Պ. Քառն, Տ. Կուլումբյանը, Ռ. Միրաբը, Վ. Օշականը, Ն. Շահգալյանը, Ռ. Սանին, Ա. Տեր-Մինասյանը:

Հանդեսը սկսվում է Ա. Տեր-Մինասյանի «1905 թ. հեղափոխությունը Անդրկովկասում» հոգվածով, որում հեղինակը կենտրոնանում է այդ թվականին անդրկովկասյան երկրներում տեղի ունեցած իրադարձությունների վրա և դրանք քննում ավելի լայն կոնտեքստում: Նա անդադառնում է հեղափոխական իրավիճակին հանգեցրած պատմական, սոցիալ-քաղաքական և էթնիկական նախադրյալներին: XIX դարի ընթացքում ռուսական բյուրոկրատիայի քաղաքականությունը Անդրկովկասի նկատմամբ միանգամայն անկայուն էր, որը, ըստ

Ա. Տեր-Մինասյանի, արտահայտվեց 1845 թ. Կովկասի փոխարքայության ստեղծմամբ և ապա դրա փոխարինումով ղեկերալ-նահանգապետի պաշտոնով 1882 թ. Ռուսական վարչակարգի ճնշումը դեմալ-նահանգապետներ Դեմոկրոկոյ-Կորսակովի (1882—90), Շերմանտեի (1890—96) և Գուրգինի (1896—1904) օրոք այնպես սաստկացավ, որ այդ ժամանակաշրջանը, հոգվածագրի դեմալ-նահանգապետներին է դիտել որպես ռուսականացման ամենից թեժ ժամանակաշրջան: Փոխարքայությունը կրկին վերահաստատվեց 1905 թ. հեղափոխության ժամանակ:

Աղեքսանդր II-ի որոշ ռեֆորմներ ռուսական վարչակարգը իրականացրեց առանց տեղական առանձնատկությունները հաշվի առնելու: Դրանով իսկ Վրաստանում ավելի ծանրացավ ճորտերի վիճակը: Անփոփոխ թողնվեցին ռուսական չրի բաշխման համար պատասխանատու մուսուլմանական սեփականա-

տերերի իրավունքները, որով մուսուլմանական հողատերերի և դուռապան բնակչության միջև լարվածությունը սրվեց, Անդրկովկասի արևելյան ալե շրջաններում, որտեղ գյուղացիները հայեր էին, տնտեսական լարվածությունը խստեղում էր կրոնականը։ Ա. Տեր-Մինասյանը ուշադրություն է դարձրել նաև դատական և բնարական բնագավառներում իրականացվող ուժեղացման անկատարություններին, որոնք բխած դժգոհություններին, որոնք նույնպես սոցիալ-քաղաքական մթնոլորտի շիկացման պատճառ հանդիսացան։ Ֆիտականը դատարկել է, որ դալովթային Անդրկովկասի սոցիալական միջավայրում 1905 թ. հեղափոխությունը պետք է ցուցադրեր, որ դասակարգային պայքարը ներթափանցված էր էթնիկական հակամարտությամբ, իսկ վերջինս կարող էր նույնպես առաջինի արտահայտությունը լինել։ Այս տեսական գրույթի ապացույցն են հայ-թաթարական բնահարմանը (ծագեցին 1905 թ. փետրվարի 6—9-ին և տարածվեցին Անդրկովկասի բոլոր ալե շրջաններում, որ խստոր բնակվում էին հայերը և աղերական թուրքերը ու արդյունքը եղան հայերի դեմ դժգոհության բռնությունները, որոնք ուղեկցվում էին զանգվածային շարժումով, ինչպես որում է հողվածագիրը՝ ռուսական պաշտոնյաների անտարբեր հայացքի տակ), որոնք հեղափոխականների համար ցնցում հանդիսացան։ Վերջիններս ղեկավարեցին դրանք որպես դեմոստրացիոն գործողություն հրահրված միապետության կողմից կռիվային պրոլետարիատի ազդեցության անհրաժեշտ էր, որ հայ-թաթարական հանգամանքներին, որոնք հանգեցրին Անդրկովկասի երեք հիմնական ազգությունների սոցիալական վերախաղերի կողմից իրենց ներպատկաները ռուսական կառավարությանը ներկայացնելուն և միևնույն ժամանակ իրենց միջև եղած տարբերությունների հստակացմանը։ Վրաց ազնվականությունը հուսով էր Վրաստանի համար ինքնավարություն ձևառ բերել, հայ բուրժուազիան ցանկանում էր ունենալ լիբերալ սահմանադրական պետություն և այդ շրջանակներում կրավարարվել տեղական ինքնավարությանը։ Թաթարական ազնվականությունը, ըստ հողվածագրի, ձգտում էր պահպանել և ընդարձակել իր արտոնությունները, իր շահերը սահմանելով ավելի մեծ ընդգրկմամբ մահմադական կրոնական ընդհանրության շահերին համապատասխան, Հեղինակի կարծիքով ամենից հետաքրքիր խնդիրն այս պակացությամբ այն է, որ երեք ազգություններից յուրաքանչյուրի մոտ ծագեց կամ վե-

րահաստատվեց ազգային գիտակցությունը։ Երանք հակում ունեցան կազմավորել իրենց առանձին ազգային կառուցվածքները, որոնց վերլուծությունը նա նվիրել է իր հողվածի ղեկավար մասը։ Հեղինակը նշում է, որ անդրկովկասյան մտավորականությունը ընդունում էր ռուսական մշակութային գերազանցությունը և, քանի որ սոցիալական և ազգային ծագումով տարբեր էր (ապագա սակարկությանցված վրաց ազնվականություն, հայ բուրժուազիա և գյուղացիություն, հարուստ մահմադական հողատերեր), այն որոշ չափով միավորված էր մշակութային սուսականացմամբ։ Ա. Տեր-Մինասյանը դրում է, որ բուլղերիկների ոռոսականացումը ակնհայտ էր, այն նաև առկա էր առաջատար վրաց, հայ և թաթար հեղափոխական մտավորականության մեջ։ Հեղինակը նշում է, որ 1905 թ. հեղափոխությունը ազգերից յուրաքանչյուրի համար մեկ կուսակցության շուրջ ազգային շինարարության ժամանակաշրջան էր և համարյա թե կարելի էր ասել մեկ ազգ. մեկ կուսակցություն, մեկ կրոն։ Անդրկովկասի հայկական միջավայրում 1903—1907 թթ. դաշնակցական կուսակցությունը առաջատար տեղ գրավեց։ Հնչականները ցարական իշխանավորների դեմ ուղղված ահաբեկչական գործողություններով 1904—1905 թթ. իրենց կուսակցության կողմն էին դրավել Բաքվի, Երևանի և Ալեքսանդրապոլի հայ բանվորների և Դաշնակցական կուսակցությունը 1904 թ. Սոֆիայում կայացած երրորդ կոնգրեսում որոշել էր իր վրա վերցնել Կովկասում հայերի պաշտպանության պատասխանատվությունը։ 1905 թ. վերջում վրացիների մոտ գերակշռող դարձավ մենշեկյան կուսակցությունը։ Եվգենի Կոնստանտինովիչը 1905 թ. Բաքվի մահմադական մամուլում, վերաբերելով թուրք-թաթարական ծագում ունեցող բնակչությանը 1904—1905 թթ. Բաքվի մուսուլմանական բանվորության միջավայրում ակտիվ պրոպագանդայով էր զբաղված Եհիմմաթա կոչվող խումբը, որի հիման վրա 1912 թ. հիմնադրվեց մուսուլմաթա կուսակցությունը։ Եզրափակելով, Ա. Տեր-Մինասյանը գրում է, որ ժամանակագրական փաստերից հետևում է, որ Անդրկովկասին բնորոշ տեղական գործոնները 1905 թ. ճգնաժամի ընթացքում ավելի կարևոր էին, քան Ռուսաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները, բայց 1905 թ. հեղափոխությունը Անդրկովկասում առաջին էր Արևելքում, որտեղ այն ունեցավ նշանակալից հետևանքներ։ Հողվածի վերջում բերված են Անդրկովկասի

բնակչությանը վերաբերող 1887 թ. վիճակագրական տվյալներ, որոնց քննությունը հեղինակը կատարել է Բ. Իշխանյանի ուսումնասիրության հիման վրա:

XVIII դարի ամերիկյան և ֆրանսիական հեղափոխությունների շնորհիվ վաճառականները Հնդկաստանում սկսեցին առաջին հայ պարբերականի հրատարակությունը, հիմնեցին քաղաքական խմբակներ և բանավիճում էին իրենց հայրենիքի ճակատագրի մասին: Նրանցից մեկը՝ Շահամիր Շահամիրյանը, հրատարակեց «Որոգայթ փառաց» տրակտատը, որը պարունակում էր գալիք Հայկական հանրապետության համար կազմված սահմանադրության նախագիծ և իրավական օրենսգրք: Այդ աշխատությունը վերաբերող երկու ակնարկներ են զետեղված ներկա հանդեսում, որոնցից առաջինն (Մ. Թուրյան, Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ը) ստորև կանդաղառնանք, իսկ երկրորդին (Զ. Խաչատրյան, Շահամիր Շահամիրյանի բնախմբական հայացքները), քանի որ այն թարգմանված է հայերենից, ընթերցողը կարող է ծանոթանալ բնագրի լեզվով (տե՛ս «Երաբեր հասարակական գիտությունների», 1982, № 3, էջ 52—62):

Մ. Թուրյանը գտնում է, որ Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ը Մխիթար Գոշի Դատաստանագրքի արժանի շարունակությունն է: Շահամիրյանը շարադրել է հիմնական հանրապետական և դեմոկրատական կարգերի առաջնորդ գաղափարը, որը հիմնված կլինի անհատի և հասարակության միջև հաստատված մերձավոր կապի վրա: Հեղինակը նշում է, որ հայ ազատագրական շարժման գաղափարները և դրանց երևան գալը համընկնում են Հոռմին, Ռուսաստանի և Նվրոպային ուղղված հայերի խնդրանքի (հայ ժողովրդին պարսից և օսմանյան ճնշումից ազատագրելու): Հետո: Ժամանակի ոգին հասկանալու համար, ըստ Մ. Թուրյանի, անհրաժեշտ է հիշել, որ XVI—XVII դդ. հայ ժողովրդի ազատագրության գաղափարով տոգորված մտածողները կրոնասեր էին: Նրանք այդ գործին մոտենում էին կրոնի և եկեղեցու հանդեպ տածած իրենց հավատից: Այդ մտածողների քաղաքական համոզմունքները բխում էին իրենց ժողովրդի և հայրենիքի ապահովությունը տեսնելու բուռն ցանկությունից, որը պարզ երևում է «Որոգայթ փառաց»-ի առաջին մասից: Ինչպես նշել է հետազոտողը, Շահամիրյանը դեմ էր ամեն տեսակի զիջումների և իր պայքարը շարունակում էր ամրապնդելով իր կապերը Ղարաբաղի մելիքների, Ռուսաստանում հայերի արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանի, վրաց թա-

գավոր Հերակլի և հայկական քաղաքական խմբերի հետ: Իր հողավոր վերջին հատվածում Մ. Թուրյանը անդրադարձել է «Որոգայթ փառաց»-ի երկրորդ մասի բովանդակած անկախ հայկական հանրապետության հատուկ օրենսդրական սկզբունքներին: Ինչպես նա նշել է, Շահամիրյանի կողմից ոչ մի կառավարական կամ սոցիալական կանոնադրություն չի անտեսված և դեմոկրատական սկզբունքները լին կորցնում իրենց արժեքը, թեև մի շարք հոգվածներ ներշնչված են կրոնական համոզմունքներով: Շահամիրյանի կարծիքով, Հայոց Տան, այսինքն Հայաստանի խորհրդարանի համակարգում նախագահությունը (պրեզիդենտությունը) պետք է վերապահվեր Ամենայն Հայոց կաթողիկոսին: Մ. Թուրյանը բարձր է գնահատել Շահամիր Շահամիրյանի դերը հայոց ազատագրական պայքարում, նրան համարելով հայ սոցիալ-քաղաքական և ազգային պատմության եզակի անձնավորություն:

Ն. Նալբաջյանը կալվեր Վիլհելմ II-ի Օսմանյան կայսրություն կատարած այցելություններին (1889, 1898) նվիրված հոդվածում, որը վերաբերում է դիվանագիտության պատմությանը, իր գնահատականն է տվել այդ իրադարձությունների կապակցությամբ եվրոպական երկրների և հատկապես Գերմանիայի կառավարական, քաղաքական շրջանների և մամուլի անդրադարձին: Ն. Նալբաջյանը իր ընդարձակ հոդվածի էջերում քննել է նաև հայերին և Հայկական հարցին վերաբերող նյութի բովանդակած քաղաքական ուղղվածությունը: Հեղինակը նշել է, որ թեև Գերմանիայում առկա էին թուրքերի և հայերի մասին դրական և բացասական պատկերացումներ, սակայն կալվերական կառավարության ղեկավարների վկայակոչումները թուրքերի վերաբերյալ դրական էին, իսկ հայերի նկատմամբ՝ իրավասակա: Ն. Նալբաջյանը մանրակրկիտ հետազոտության շնորհիվ կարողացել է ցույց տալ, որ Օսմանյան կայսրության տարածքում ապրած ազգային փոքրամասնությունների և հատկապես հայերի ազգային շահը և արժանապատվությունը ոտնահարող թուրք կառավարության վարած քաղաքականությունը ոչ միայն չէր դատապարտվում մեծ տերությունների կողմից, այլև բարոյական աջակցություն էր ստանում, օրինակ, կալվերական Գերմանիայի ղեկավարության կողմից:

Հանդեսը ավարտվում է Գ. Արմենի (Անի. հայ ճարտարապետության վավերագրեր, № 12, Միլան, 1984), Վ. Օշականի (Վարթանյան Ա. Ազոուրուկը: Պարխուրց, Ստամբուլ, 1988), Մ. Ռոբինսոնի (Նորգրանդ Զ. Հա-

յաստան), Լ. Զորրաչյանի (Ֆիլիիս Զ. Սիմվոլ, առասպել և ճարտասանություն. Ճշակությունը քաղաքականությունը հայ-ամերիկյան բնակչության մեջ, Նյու Յորք, 1989) և

Է. Հովհաննիսյանի (Գրիգորյան Մ. Միջանցք, Նյու Յորք) գրախոսականներով:

Պատմ. գիտ. դոկտոր Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՄԵՑ ԵՂԵՌՈՒ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԲՈՒՂԱՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԵՎ ԲՈՒՂԱՐԱՋԱՑ ՀԱՄԱՑՆՔՈՒՄ

Հայ ժողովրդի բաղմադարյան պատմության մեջ հաղթանակներին, տնտեսական-քաղաքական ու մշակութային փայլուն հաջողությունների կողքին արձանագրված են բազմաթիվ մեծ ու փոքր ազնվանք, կոտորածներ ու բռնազաղթեր, որոնք չլստել են նրա ամբողջականությունը: Մակալն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ 1915 թ. ապրիլյան եղեռնը գերազանցեց բոլոր դժբախտությունները իր ծավալով, անկարագրելի սարսափներով, արագ զործադրումով ու վաշտագությամբ: Երիտթուրքական ոճրագործները որոշել էին վերացնել հայ մուսուլման պատմական բնակիչ և վերջնականապես լուծել «Հայկական հարցը»:

Հայ ժողովրդի զլխին պայթած փոթորիկը բոլորից առաջ արձագանք գտավ բուլղարական մամուլում, որը աշտարակյան հետևիվում էր Թուրքիայում կատարվող անցադարձին: Մայրաքաղաքի՝ Սոֆիայի համարյա բոլոր թերթերը անդրադառնում էին Հայաստանի ողորբեղական վիճակին: Բազմաթիվ թերթերի էջերում սուր քննադատական հոդվածներ լույս տեսան Երիտթուրքերի բարբարոսությունների դեմ: Այդ բոլորը բուլղար ժողովրդի բազմադարյան բարեկամության ու եղբայրության հորատաշալտություն էր, որոնք սակզծվել, փայփայվել ու դարձացել էին օսմանյան ծանր լծի պայմաններում:

Մեծ եղեռնի նախօրեին Երիտթուրքերի կառավարությունը բոլոր միջոցներով ձգտում էր վերացնել այդ պատմական կապերը հայ և բուլղար ժողովուրդների միջև, դիմելով զանազան խարդախությունների ու պրովոկացիաների:

1915 թ. փետրվարին Ռուսի քաղաքում թուրքական մզկիթի քակում տեղի ունեցավ հրդեհ, որը տեղի թուրքերը վերագրեցին հայերին: Բուլղարական քննչական մարմինների ստուգումը պարզեց, որ դա զրպարտություն էր: Բուլղարական պետական մարմինները պատմեցին հանցագործներին և հայտարարեցին, որ նման երևույթներ կրկնվելու դեպքում ստիպված կլինեն դիմել ավելի խիստ միջոցների: Միաժամանակ բուլղարական կառավար-

ությունը կոստանդնուպոլիսի գերմանական զեռպանի միջոցով հայտնեց իր բողոքը հայկական տեղահանումների ու ձերբակալումների դեմ, ավելացնելով, որ հայերի նկատմամբ հալածանքներն ու կոտորածները շարունակվելու դեպքում Բուլղարիայի և Թուրքիայի հարաբերությունները կսրվեն:

1915 թ. ապրիլից Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում լայն շարժում ծավալվեց հայ ժողովրդի ցնդասպանության դեմ: Սելվեն, Շումեն, Ռուսե, Պլովդիվ, Վանա, Ստարա-Ջագորա և այլ քաղաքներում բուլղարների և հայերի համատեղ բողոքի ժողովներն ու միտինգներ կազմակերպվեցին: Թուրքական նախճիրների դեմ կողոպտեր ու բռնաձևեր էին ուղարկվում բուլղարական կառավարությանը, պահանջելով նրա միջամտությունը այդ ոճիրների դեմ:

Այդպիսի մի ժողովում, որը տեղի ունեցավ Ռուսե քաղաքի հայկական համայնքի ղեկավարության հրավերով, հետևյալ դիմումն ուղարկվեց կառավարության նախագահ Ռոդոստայովին. «Ահա տարի մըն է, որ հայ ժողովուրդը ենթակա է քնաջնջան թուրք կառավարության կողմից: Հակառակ մեր ժողովուրդի օրինական ընթացքին թուրք պետության հանդեպ, կառավարությունը ստակալի հալածանքով, բռնություններով ու ջարդով կոշնյացնե խաղաղ հայ ազգաբնակչությանը: Հատուկ պատրաստված ծրագրով ան սխառմատիկ կերպով կհանեն ամբողջ շրջաններու հայերը և կաքտրեն Փոքր Ասիայի ամենախուլ անկյունները, իսկ հայ օջախները կղրվեն մահմեդականներ և քուրդական խմբեր, պարպելու համար հայկական գավառները հայ տարրերն, Վաղվան դարհուրելի կատաստրոֆի նախօրյակին մենք Ռուսի հայերս հավաքվելով այսօր սղալու համար մեր թանկագին նահատակ զոհերը, կդիմենք այսօր Բուլղարիայի, կոչում կրենք իր ամենանվիրական զգացումներուն և կխեղրենք, որ ինչպես միշտ, այս անգամ ալ միջամտե թուրք կառավարու-

1 «Հայաստան», Պլովդիվ, 24 փետրվարի 1915: